ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին 12 հունիսի 2024թ.
ժամը 12:00-ին

2024 թվականի հունիսի 12-ին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական շենքում Վաղարշապատ համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերաբերյալ հանրային քննարկում:

Ելույթներ.

Դ. Գասպարյան: Բացման խոսքով հանդես եկավ Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը: Ողջունելով ներկաներին՝ Դ. Գասպարյանը նշեց, որ Վաղարշապատ համայնքի 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Վաղարշապատ համայնքի զարգացման գլխավոր ֆինանսական փաստաթուղթը միջնաժամկետ կտրվածքով՝ ելակետ հանդիսանալով հաջորդող տարեկան բյուջեի նախագծման գործընթացում: ՄԺԾԾ-ում ներկայացված են Վաղարշապատ համայնքի՝ հաջորդ 3 տարիների բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտները՝ ըստ ձևավորման աղբյուրների, վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, վարչական և ֆոնդային մասերի հատկացումների կատարումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

ՄԺԾԾ-ն կնպաստի առավել հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, հնարավորություն կտա միջնաժամկետ կտրվածքով ուսումնասիրելու համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ առանձին ուղղությունների, ինչպես նաև առավել տեսանելի կդառնան ծրագրերի շարունակական ապահովման ֆինանսական մեխանիզմները: ՄԺԾԾ-ն հնարավորություն կտա նաև առավել արդյունավետ գեներացնել համայնքի եկամուտները, կնպաստի վերջիններիս ավելացմանն ուղղված քաղաքականությունների և միջոցառումների մշակմանը:

Վաղարշապատ համայնքի 2025-2027թթ. համայնքի բյուջեի եկամուտների վերաբերյալ կանխատեսումները կատարվել են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների հիման վրա՝ նպատակ ունենալով նպաստելու համայնքի համաչափ զարգացմանը, ծառայելու համայնքային շահերին և չխոչընդոտելու համայնքի տնտեսական զարգացմանը: Եկամուտների կանխատեսումներն իրականացնելիս հաշվի են առնվել ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված աղբյուրներից դեպի համայնքի բյուջե մուտք գործող միջոցները, համայնքի բյուջեի միջոցների վերաբերյալ նախորդ տարիների փորձը, փաստացի և առկա բազաների տվյալները:

Լ. Քալաշյան: Վաղարշապատի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Քալաշյանը ներկայացրեց Վաղարշապատ համայնքի 2025-2027թթ եկամուտների ամփոփ նկարագիրը, ըստ որի՝ համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտները 2025-2027թթ. համար կանխատեսվել են համապատասխանաբար 3207162.0 հազ. դրամ, 2777962.0 հազ. դրամ, 2791962.0 հազ. դրամ, որից վարչական բյուջեի եկամուտները կազմում են համապատասխանաբար 2667962.0 հազ. դրամ, 2716962.0 հազ. դրամ, 2731962.0 հազ. դրամ, իսկ ֆոնդային բյուջեի եկամուտները՝ 539200.0 հազ. դրամ, 61000.0 հազ. դրամ, 60000,0 հազ. դրամ:

✓ Գույքահարկ անշարժ գույքի մասով համապատասխանաբար՝ 147000,0 հազ. դրամ, 183000,0 հազ. դրամ, 183000,0 հազ. դրամ: Աճը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով:

- Գույքահարկ փոխադրամիջոցի մասով՝ 486000.0 հազ. դրամ, 485000.0 հազ. դրամ, 504000.0 հազ. դրամ:

✓ Տեղական վճարների մասով, մասնավորապես՝

- Մանկապարտեզի ծնող. միջոց համապատասխանաբար՝ 145959.0 հազ. դրամ, 168257.3 հազ. դրամ, 168208.5 հազ. դրամ: Աճը պայմանավորված է նոր խմբերի ավելացմամբ և նոր մանկապարտեզի բացմամբ:

Ինչպես ցանկացած կանխատեսում, այնպես էլ եկամուտների կանխատեսումները պարունակում են որոշակի ռիսկեր, որոնք կարող են հանգեցնել սպասումների փոփոխությանը: Նմանատիպ ռիսկերի շարքին են դասվում տնտեսական աճը պայմանավորող գործոնները: Տնտեսական աճի՝ կանխատեսվածից ցածր լինելու պարագայում ցածր կլինեն համայնքի բյուջե մուտք գործող հարկային եկամուտները, հետևաբար համայնքի բյուջեի ծախսերի ամբողջական կատարումը կկանգնի վտանգի առջև: Մյուսը գնաճային ռիսկն է, որի՝ կանխատեսվածից բարձր մակարդակը կարող է հանգեցնել անվանական ՀՆԱ-ի ցուցանիշի ավելացմանը, որն էլ իր հերթին կառաջացնի լրացուցիչ հարկային եկամուտներ՝ մեծացնելով բյուջեի ծախսերի աճի հնարավորությունները:

Ներկայացրեց Վաղարշապատ համայնքի 2025-2027 ծախսերի պլանի ամփոփ նկարագիրը, ըստ որի՝ Վաղարշապատ համայնքի 2025-2027թթ. ծախսերը կանխատեսվում են համապատասխանաբար՝ 3207162.0 հազ. դրամ, 2777962.0 հազ. դրամ, 2791962.0 հազ. դրամ, որոնք ուղղված են համայնքային խնդիրների արդյունավետ լուծմանը, ինչպես նաև բյուջետային միջոցների ծախսման արդյունավետության ապահովմանը՝ անհրաժեշտ ծավալով բյուջետային եկամուտների ապահովման ենթատեքստում:

Ծախսային քաղաքականությունը միտված է ձևավորելու առավել հիմնավորված և հաշվեկշված համամասնություններ՝ ապահովելով բյուջետային ծախսերի պլանավորման և կատարման հասցեականությունը, նպատակայնությունն ու արդյունավետությունը: Համայնքի բյուջեի ծախսային մասի կանխատեսումների վրա էականորեն կարող են ազդել տեղական նշանակության բազմաբնույթ հիմնախնդիրների առաջացումը, բնակչության սոցիալ-տնտեսական պահանջմունքների փոփոխությունը, երկարաժամկետ նպատակային ծրագրեր իրականացնելու անհրաժեշտության առաջացումը և մի շարք այլ գործոններ:

Ծախսային մասը կազմելու համար հիմք է հանդիսացել համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ իր համապատասխան արդյունքներով, որոնց համայնքը ցանկանում է հասնել իրականացվելիք ծրագրերի շրջանակներում՝ ծախսեր կատարելու միջոցով:

Վարչական բյուջեի ծախսերը կազմում են՝ 2667962.0 հազ. դրամ, 2716962.0 հազ. դրամ, 2731962.0 հազ. դրամ: Ֆոնդային բյուջեի ծախսերը կազմում են՝ 539200.0 հազ. դրամ, 61000,0 հազ. դրամ, 60000,0 հազ. դրամ:

Ընդհանուր ծախսերը ըստ բյուջետային տնտեսագիտական դասակարգման բնույթների կարելի է նկարագրել հետևյալ խմբերում՝

- Աշխատանքի վարձատրություն, պարգևատրում, դրամական խրախուսում՝ 838175.5 հազ. դրամ, 838175.5 հազ. դրամ, 838175.5 հազ. դրամ,
- Ծառայությունների ու ապրանքների ձեռքբերում՝ 415760.0 հազ. դրամ, 420760.0 հազ. դրամ, 430760.0 հազ. դրամ.
- Սուբսիդիա՝ 1180662.5 հազ. դրամ, 1202812.5 հազ. դրամ, 1220812.5 հազ. դրամ,

- Հիմնական միջոցներ՝ 539200.0 հազ. դրամ, 61000,0 հազ. դրամ, 60000,0 հազ. դրամ,
- Նպաստ և սոցիալական ֆոնդ՝ 20000,0 հազ. դրամ, 20000,0 հազ. դրամ, 20000,0 հազ. դրամ:

Բյուջետային ծախսերի բաշխումը ըստ գործառական դասակարգման բնույթի ներկայացված է ըստ հետևյալ ոլորտների՝

- Համայնքապետարան՝ 1006215.1 հազ. դրամ, 533015.1 հազ. դրամ, 532015.1 հազ. դրամ,
- Բարեկարգում՝ 391092.4 հազ. դրամ, 391092.4 հազ. դրամ, 401092.4 հազ. դրամ,
- Բնակարանային և կոմունալ ծառայություն՝ 57208.0 հազ. դրամ, 57208.0 հազ. դրամ, 57208.0 հազ. դրամ,
- Աղբահանություն՝ 360220.0 հազ. դրամ, 360220.0 հազ. դրամ, 360220.0 հազ. դրամ,
- Մարզադպրոց՝ 147050.3 հազ. դրամ, 149150.3 հազ. դրամ, 151150.3 հազ. դրամ,
- Գրադարան՝ 55073.7 հազ. դրամ, 56973.7 հազ. դրամ, 58973.7 հազ. դրամ,
- Պատմա-ազգագրական թանգարան՝ 13258.3 հազ. դրամ, 14408.3 հազ. դրամ, 15408.3 հազ. դրամ,
- Տուն-թանգարան՝ 16835.1 հազ. դրամ, 17735.1 հազ. դրամ, 18735.1 հազ. դրամ,
- Մշակույթի պալատ՝ 52993.8 հազ. դրամ, 54093.8 հազ. դրամ, 56093.8 հազ. դրամ,
- Մանկապարտեզներ՝ 577873.3 հազ. դրամ, 588873.3 հազ. դրամ, 596873.3 հազ. դրամ,

Դպրոցներ՝ 317578.0 հազ. դրամ, 321578.0 հազ. դրամ, 323578.0 հազ. դրամ:

Հարց ու պատասխանի ընթացքում հնչեցին հետևյալ հարցերը.

Ա. Մանուկյան -Հանրային քննարկման մասնակից, Վաղարշապատ համայնքի բնակիչ Արմեն Մանուկյանը հարցրեց, արդյոք արդյունավետ է ՄԺԾԾ-ն համայնքի գործընթացի համար:

Հարցին ի պատասխան զեկուցող Լ. Քալաշյանը հայտնեց, որ այո ծրագիր արդյունավետ է, քանի որ նախնական ունենում ենք առաջիկա տարիների բյուջեների նախագծերը:

Ն. Հովհաննիսյան- Հանրային քննարկման մասնակից, Վաղարշապատ համայնքի բնակիչ Նաիրա Հովհաննիսյանը հարցրեց, թե ի՞նչ ընթացակարգով են իրականացվել 2025-2027թթ. եկամուտների հավաքագրման տվյալները, ինչին ի պատասխան Դ. Գասպարյանը հայտնեց, որ առաջին հերթին հիմք են հանդիսացել 2024թ ընթացիկ բյուջեի ելակետային տվյալները, ինպես նաև յուրաքանչյուր պատասխանատու ստորաբաժանման (Եկամուտների հավաքագրման բաժին, Քաղաքաշինության և հողաշինության բաժին, Կրթության և մշակույթի բաժին, Բնակարանային կոմունալ վարչություն, «Բարեկարգում» տնօրինություն, ՀՈԱԿ-ներ) ներկայացրած կանխատեսումները՝ հաշվետու ժամանակահատվածի հնարավոր մուտքերի վերաբերյալ:

Ն. Հովհաննիսյանը հարցրեց նաև. «Ներկայացված 2025-2027թթ. եկամուտներն ու ծախսերը վերջնական են, թե՞ ենթակա են փոփոխման»: Զեկուցող Լ. Քալաշյանը ընդգծեց, որ դրանք կանխատեսված տվյալներ են, որոնք ենթակա են փոփոխման:

Կ. Սարգսյան-Ինչպիսի կապիտալ շինարարական աշխատանքներ են նախատեսվում կատարվեն 2025 թվականին: Ինչին ի պատասխան համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Մկրչյանը հայտնեց, որ 2025 թվականին սուբվենցիոն ծրագրերով կիրականանա Էջմիածին քաղաքի Թումանյան և Պատկանյան փողոցների հիմնարորոգման աշխատանքները: Ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 394200.0 հազ. դրամ, որից պետությունը հատկացնելու է 35%՝

Վ. Ազատյան- Հանրային քննարկման մասնակից, Վաղարշապատ համայնքի բնակիչ Վիկտորիա Ազատյանը հարցրեց, որ նկատել է վարչական բյուջեի եկամուտների մեջ փոխվել է պետական բյուջեից համահարթեցման կարգով տրամադրվող դոտացիայի թիվը:

Հարցին ի պատասխան համայնքի ղեկավար Դ. Գասպարյանը հայտնեց, որ համահարթեցման կարգով տրամադրվող դոտացիայի թիվը նախնական փոխվել է, դեռ հաստատված չէ, այն կարող է փոփոխվել: Դոտացիայի թվի բարձրացումը պայմանավորված է տնտեսական աճի բարձացման և բազային ճշտումների հետևանքով: Այդ նպատակով վերահաշվարկ կատարելով մեզ է տրամադրվել նոր դոտացիայի նախնական թիվ: Դրանից ելնելով մեծացել են եկամուտները և կատարվել է համապատասխան վերաբաշխում:

Հարցերի բացակայության հիմքով հանրային քննարկումն ավարտվեց:

Հարց ու պատասխանի ժամանակ հավելյալ հարցեր չեն հնչել:

Որոշում

Ամփոփելով հանրային քննարկումը՝ մասնակիցները հավանության արժանացրին Վաղարշապատ համայնքի 2025-2027թթ. ծախսերի ծրագիրը. որոշվեց այն ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու հաստատմանը:

Զեռնարկող՝ Վաղարշապատի համայնքապետարան Դ. Գասպարյան

Քննարկման վարող՝ Լ. Քալաշյան

Արձանագրող՝ Շ. Տեր-Խաչատրյան

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով: